ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ — «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 5 1960

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ՝ ԳՆԴԻԿԱՎՈՐ ԳՐՉԻ ՄԱՍԻՆ

Ձեռագրերում հաճախ հանդիպում են գրենական և նկարչական պիտույքներ պատկերող զանազան մանրանկարներ, որտեղ ներկայացված են եղեգնյա գրիչներ, նրանց մշակելու համար գործածվող մկրատներ, դանակներ, ապա թանաքամաններ, ներկամաններ։

Մեր ուշադրությունը գրավել է մի հետաքրքիր գործիք, որը պայմանականորեն կոչում ենք գնդիկավոր գրիչ, որովհետև նրա երկու մասերն իրար միացած են մի սնամեջ գնդիկով։ Թանաք պարունակող այս գնդիկից դեպի վերև ծայր է առնում մի երկարավուն ձողիկ, որը գրչի կոթն է, իսկ գնդիկից ներքև իջնող ձողիկի սուր ծայրը ծառայում է որպես գրչածայր։

Առաջին անգամ գնդիկավոր գրչի հանդիպում ենք 1166 թ. Հռոմկլայում գրված մի ավետարանում (ձեռ. № 7347)։ Այս ձեռագրի 12բ էջում նկարված է Մատթեոս ավետարանիչը, որի մոտ, սեղանի վրա, դրված է չորս գնդիկավոր գրիչ։ Նույն ձեռագրում, պատկերված մյուս երեք ավետարանիչների մոտ, դարձյալ հանդիպում ենք այդպիսի գրիչների։ Գնդիկավոր գրիչներ պատկերված են նաև № 7737 ձեռագրի (ԺԲ դար) 208բ և 334բ էջերում։

Ուշագրավ է Կիլիկիայի Սկևռա վանքում 1173 թվականին ընդօրինակված՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ձեռագիրը, որի 7բ էջին պատկերված է Նարեկացին՝ գնդիկավոր գրիչը ձեռքին (տես նկ. 1)։



Նկ. 1. Հատված № 1568 ձեռագրի 7բ էջի մանրանկարից (Կիլիկիա, 1173 թ.)

Հիշատակված Կիլիկյան ձեռագրերից հետո, գնդիկավոր գրիչներ հանդիպում ենք 1211 թ. Հաղբատի ավետարանում (էջ 18բ), որը ծաղկել է Մարգա-